

48. ԳԵՂԻ ՔԵՀԵՆ

Երկու ախպեր գըլլին, մեկը խելառ, մեկը խելացի։ Գեղի քյոխվեն գուքա կ'ըսե.— Ձեր թագավորական վերգին տվիք։

Խելառ ախպեր կ'ըսե.— Մենք մեկ դյուգեմ ունինք, էքվան տանեմ ծախեմ, բերեմ ձեր վերգին տամ։

Էքվընեն ելավ, չվան դյուգի վիղը ցքեց, ելավ գնաց, գնաց ուր էրթըլեն խաբար չէր, որ ինքը խելառ էր։ Գնաց մե մերիի մեշը մըտավ, տեսավ օր ծառի ծերը ղառղառները կը կայեն, ըսավ՝ բալքի իմ ղյուգեն գուղեն, ղառղռին ըսավ.— Ես երեսուն ղրուշի չեմ տար,— վեր այեց, տեսավ օր ղառղառը կը կայեր, վեր այեց ըսավ.— Քառսուն ղուրուշի չեմ տար։

Ղառղառը կայեր, էն գիտեր, թե իր գյուգեն գուղե։

Վեր այեց ըսավ.— Ես սաքսանի[1] կուտամ։— Ղառղառը իրեն լեզվով ղա կեներ։

— Սաքսան, սաքսան, հա սաքսանի կուտամ,— ըսավ,— դյուգեն,— ծառին կապեց չվանը, ու էկավ։ Դյուգեն մնաց հոն։ Դյուգեն գիշերը գելերը էկան ու կերան։

Իրիկունը ախպերը ըսավ.— Դյուգեն ի՞նչ էրիր։

Ըսավ.— Ես ծախեցի սաքսան ղուրուշի ղառղըռին։

Ախպերն ըսավ.— Տարավ, դյուգեն ղուր տեղը կորուց,—հարցրեց,— փարեն ուր է։

[1] Ուքսուն (Ե. Բ.)։

Ըսավ.— էքվան կու բերեմ գու։

Քահեն էկավ էրթիկեն ըսավ.— Հ՚ո՞ւր է ձեր վերգին, բերեք տվեք։

Խելառ ախպերը ըսավ.— Ես ծախել եմ սաքսան ղուրուշի, էքվան կէրթամ, փարեղ կու բերեմ գու, վերգիդ կուտամ։

Էքվընեն խելառ ախպերը ելավ, էկավ մերին, տեսավ դյուգեն չկա, ղառղառը կու ղայեր։

Մարթը կըսե.— Տո՛ւր փարես։

Ղառղառը իրեն լեզվով կը ղայեր,— զա՜։

Հերսոտալով խելառը բոռաց ու քարը դարվեր ղառղռին նետեց։ Քարը ծառի աչին կպավ, մե թախումըմ օսկի ցած թափավ։ Օսկին ժողվեց, լցեց խելառը ծոցը։ Իրիկուն էղավ, էկավ իրեն տունը։ Մութը, աշնար նամազին ընկել էր։ Քահեն էկավ իրենց երթիկը, խելառը հերսոտելով բոռաց, կացինը առավ.—Դու իմ երթիքս էս վախտը ինչի՞ ես էկել,— վազեց, կացինը քահի ճակատինը զարդեց, ըսպանեց, որ մարթ չկար։

Խելացի ախպերը ըսավ.—Ես ինչպե՞ս էնեմ, օր էս մարթը զարդեց քահեն սպանեց։ Ես ինչպես էնեմ, օր էս բանը կորցնեմ, օր կառավարութեն չիմանա։

Տեսավ օր խելառը ըսպանեց, քաշեց բերեց հորը ցքեց։ Գիշերը խելացի ախպերը կու մտածեր. «Ինչպե՞ս էնեմ, էս բան կորցնեմ, օր կառավարությունը ինձի չ՚բանտե»։

Գնաց, խելացի ախպերը շանդակը հորեն հանեց, իրեն խելառ ախպերը քնել էր, բերեց շանդակը, փորեց, հողի տակը պայեց։ Մե էծմ ունեին, բերեց էծը ըսպանեց խելացի. ախպերը, ցքեց հորը[1]։ Առավոտուն էքվընեն, գեղացիք ելան քահեն փնդռել, գեղոց գեղ կու փնդռեին, չգտան։ Խելառ ախպերը ըսավ.— Ինչի ձեր քահեն կու փնդռեք, ես ձեր քահեն սրպանեցի հորը ցքի։

Խելացի ախպերը ըսավ.— Դուք էսոր խոսքին միք այե, էծըմ ունեինք, զարդեց ըսպանեց հորը ցքեց, հիմա կըսե. «Ես քահեն ըսպանեցի, հորը ցքի»։

Դրացիները ո՛րը հավատացին, ո՛րն է չ՚ավատացին։

Խելառը ըսավ.— Ինչի՞ չեք ավատա, ինձի կախեք ձեր քահենը հորեն հանեմ։

Դրացու մեկը ըսավ.— Ինչի՞ չ՚ըլլի, կախենք, հանե, այենք թե ի՞նչ է։

---

[1] Բնագրում՝ ցքեց-չիմ (Ս. Կ.)։

Ախպերն ըսավ.— Միք հավատա, մեր էծը ըսպանեց, հորը ցքեց, գիտե թե ձեր քեհեն է։

Մարկոզ անունով մարթմ կար, ըսավ.— Ինչի դեմ եք առել, չվան տվեք ես կախեմ։— Մարկոզ խելքոի թևերու տակը չվանը կապեց, հորը կախեց, խելառը հորի մեշը իջավ, կայնավ իծու վրա, հորեն ճվաց խելառը.— Ձեր քեհեն մազո՞տ էր։

Ախպերը ըսավ.— Ես չէի ըսե, թե էծը ըսպանեց, ցքեց հորը, խելառ է։

Խելառը ձեռք աջմընձեց[1] կոդոշները ձեռքը էկան, դարվեր ճըվաց.— Ձեր քեհենը կոտոշ ունե՞ր։

Ախպերն ըսավ.— Տեսա՞ք, էծն է։

Խելառը աջմընձեց օտքերը ձեռքն էկան, բոռաց.— Ձեր քեհեն չորս ոտք ունե՞ր։

Տեսան օր խոսած խոսքը խելքոի կու խոսի դու։ Մարկոզ բոռաց՝ չորս է, բռնե մեր քեհենը հանենք։

Մարկոզ քաշեց հանեց, տեսան օր էծն է, խելացի ախպերը ըսավ.— Ես ձեզի չ'ըսի օր էծը ըսպանեց, հորը ցքեց, մենք ձեր քեհեցեն խարար չենք։

---

[1] Շոշափել (Ս. Բ.)։